# ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ

ՀՀ, 0015, ք. Երևան, Արգիշտիի 1,հեռ.՝ (+374 11) 514 200, ֆաքս (+374 11) 514 004, էլ.փոստ՝ mayor@yerevan.am

№ 06/20736 «01» 09 2021թ.

**<<ՀԱՅՐ ԵՎ ՈՐԴԻ ՁԻԼԱՎՅԱՆՆԵՐ>> ՍՊԸ-Ի**

**ՏՆՕՐԵՆ Վ. ՀԱՅՐԱՊԵՏՅԱՆԻՆ**

***ՀՀ Տավուշի Այրում համայնք, գյուղ***

***Հաղթանակ, 1-ին փ.,2-րդ նրբանցք 3-րդ շենք***

**Ծ Ա Ն Ու Ց Ում**

**Պայմանագիրը միակողմանի լուծելու մասին**

*Երևանի քաղաքապետարանի և «Հայր և որդի Ձիլավյաններ» ՍՊԸ-ի միջև 25.05.2021թ. կնքված ԵՔ-ԳՀԱՊՁԲ-21/88 և 14.06.2021թ. կնքված ԵՔ-ԳՀԱՊՁԲ-21/118 ծածկագրերով գնման պայմանագրերի 1.1 կետերի համաձայն՝ «Վաճառողը պարտավորվում է սույն պայմանագրով սահմանված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով Գնորդին մատակարարել պայմանագրի N.1 հավելվածով՝ Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցով նախատեսված ապրանքը (այսուհետ՝ ապրանք), իսկ Գնորդը պարտավորվում է ընդունել ապրանքը և վճարել դրա համար»:*

*Երևանի քաղաքապետարանը 28.07.2021թ. հ.06/17771 գրությամբ դիմել է Ձեզ, որպեսզի հնարավորինս սեղմ ժամկետում կարգավորեք խնդիրը, սակայն «Հայր և որդի Ձիլավյաններ» ՍՊԸ-ի կողմից ստացվել է պատասխան առ այն, որ ընկերությունը հրաժարվում է մատակարարել 25.05.2021թ. կնքված ԵՔ-ԳՀԱՊՁԲ-21/88 և 14.06.2021թ. կնքված ԵՔ-ԳՀԱՊՁԲ-21/118 ծածկագրերով գնման պայմանագրերով նախատեսված ապրանքները:*

*ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 408-րդ հոդվածի համաձայն՝ «Պարտավորության խախտում է համարվում այն չկատարելը կամ անպատշաճ (կետանցով, ապրանքների, աշխատանքների և ծառայությունների թերություններով կամ պարտավորության բովանդակությամբ որոշվող այլ պայմանների խախտմամբ) կատարելը»:*

*ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 466-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ «Պայմանագիրը լրիվ կամ մասնակի կատարելուց միակողմանի հրաժարվելու դեպքում, երբ պայմանագրից հրաժարվելը թույլատրվում է օրենքով կամ կողմերի համաձայնությամբ, պայմանագիրը համապատասխանաբար համարվում է լուծված կամ փոփոխված»:*

*Երևանի քաղաքապետարանը, ղեկավարվելով վերը նշված իրավական հիմքերով, միակողմանի հրաժարվում է կնքված պայմանագրերից՝ համապատասխանաբար համարելով լուծված և պատշաճ ծանուցումն ապահովելու նպատակով կիրառելով ՀՀ կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի N526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման մասին» կարգի 33-րդ կետի 17-րդ ենթակետով սահմանված դրույթները:*

**Հ.ՄԱՐՈՒԹՅԱՆ**